Արձանագրություն N 6

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-37 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան **<< 03>> 09. 2024թ.ժամը 15:00**

Օրակարգ ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ունիվերսալ թափքով մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-37 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1. ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-37 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձաժողովի կոմից ուսումնասիրվել են ներկայացված հայտերը: Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ԱՁ Ֆերդինանտ Նազարեթյանի հայտը գնահատվում է անբավարար: Անբավարար գնահատման հիմք է հանդիսանում ԱՁ Ֆերդինանտ Նազարեթյանի կողմից ներկայացված հայտի ապահովումը, որում բացակայում է հրավերի օրինակելի ձևով սահմանված Հավելված 2-ի 11-րդ կետը, որով սահմանված է, թե երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ի՞նչ կարգով են ենթակա լուծման: Հաշվի առնելով, որ ԱՁ Ֆերդինանտ Նազարեթյանը ներկայացրել է ՌԴ-ում գործող բանկի կողմից թողարկված բանկային երաշխիք, առավել կարևոր էր նշել, թե ո՞ր երկրի օրենքով են կարգավորվելու երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը:

Ելնելով վերոնշյալից գնահատող հանձնաժողովը որոշեց.

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-37 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ԱՁ Ֆերդինանտ Նազարեթյանի հայտը մերժել՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-37 ծածկագրով հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.6 ենթակետի,այն է ՝ Մասնակցի հայտը ենթակա է մերժման, եթե դրանում բացակայում է հայտի ապահովումը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ/2024/Հ-37 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի: Անգործության ժամկետը սահմանվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից 10 օրացուցային օր :

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Աբազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Է. Օհանյան

Մ. Վահրադյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան